

ԿԱՐԳ
ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում կամ բուհերում (այսուհետ՝ Կազմակերպություն) ՀՀ պետական բյուջեից բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրով իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գործուղելու նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջոցով ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանները և գործընթացը:

1. Գիտաշխատողներին ֆինանսական աջակցություն տրամադրվում է միջազգային գիտաժողովին, գիտական կոնֆերանսին, սիմպոզիումին կամ սեմինարին (այսուհետ՝ գիտական միջոցառում), որպես կանոն, բանավոր զեկույցով հանդես գալու համար գործուղելու դեպքում՝ գործուղման ճանապարհածախսը հոգալու նպատակով:

2. Կազմակերպության ղեկավարը, գիտական միջոցառմանը գիտաշխատողի մասնակցության հրավերը ստանալուց հետո, ոչ ուշ, քան գործուղման մեկնելու օրվանից երեսուն օր առաջ, ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով դիմում է Կոմիտե՝ հիմնավորելով տվյալ գիտական միջոցառմանը գործուղվողի մասնակցելու անհրաժեշտությունը, կից ներկայացնելով գիտական միջոցառման կազմակերպչի հրավերը:

3. Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից Կազմակերպության ներկայացրած փաստաթղթերի՝ սույն կարգին համապատասխանության ստուգումից հետո, Վարչության պետը Կոմիտեի նախագահին ներկայացնում է զեկուցագիր՝ համապատասխան որոշում կայացնելու առաջարկությամբ:

4. Ֆինանսական աջակցության վերաբերյալ դրական կամ բացասական որոշում կայացնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն գրությամբ այդ մասին տեղեկացնում է Կազմակերպության ղեկավարին:

5. Դրական որոշման դեպքում Կազմակերպությունը կազմակերպում է տոմսի գնման գործընթացը՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի:

6. Տոմսի գնման վերաբերյալ Կազմակերպությունը գրությամբ տեղեկացնում է Կոմիտեին՝ կցելով գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի պատճենները:

7. Փաստաթղթերի պատճեններն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է Գիտաշխատողներին գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման հանձնարարության պայմանագիր, համաձայն որի՝ Կոմիտեն իրականացնում է կատարված ծախսերի փոխհատուցում:

8. Կազմակերպության ղեկավարը, գործուղման ավարտից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտե է ներկայացնում գործուղված գիտաշխատողի հաշվետվությունը՝ օդանավով ճամփորդելու դեպքում կցելով ուղևորի նստեցման կտրոնների պատճենները:

9. Վարչության կողմից ընդունվում է հաշվետվությունը. անճշտության հայտնաբերելու դեպքում Վարչության պետը Կոմիտեի գլխավոր քարտուղարին ներկայացնում է համապատասխան զեկուցագիր: